ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ IX, № 3, 1956 Биол. и сельхоз. науки

Հ. Գ. ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆԻ ՄԻ ՔԱՆԻ ՍՈՐՏԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԼԻՆԻՆՈՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Մեր նպատակն է եղել՝ Լոռու հարթավայրի պայմաններում 1950—51 թթ. ստուգել ու հայտնաբերել սիրոսի համար եգիպտացորենի առավել բերքատու, ցրտադիմացկուն և որպես անասնակեր բարձր արժեք ներկայացնող սորտեր՝ արտադրության մեջ ներդնելու համար։

Սորտափորձարկման են դրվել եգիպտացորենի 9 սորտեր և մեկ ձև՝ Միննեսոտա-23, Դրուշևսկայա, Կարծր-13 ձև, հիբրիդ Բուկովսկի, Բարբա, Ստերլինգ, Իմերետինսկի, Շարքային, Աղժամետսկի, Կրուգ։

Փորձերը կատարվել են 1950—1951 թվականներին Լոռու հարթավայրի (Անասնապահության ինստիտուտի փորձադաշտում) անջրդի պայմաններում (Կալինինո)։

Բույսերի աճման ու զարգացման լավագույն պայմանները ստեղծելու նպատակով 1950 թվականին, ցանքերի մասսայական ծլումից հետո, հանքային պարարտանյութերով անուցում է տրվել յուրաքանչյուր հեկտարին ամոնիում սուլֆատ՝ 100 կգ, սուպերֆոսֆատ՝ 180 կգ, կալիումական աղ՝ 80 կգ, իսկ 1951 թվականին նույն պարարտանյութերը և նույն քանակով տրվել են նախացանքային փոցխի տակ։

1950 թվականի փորձի նախորդը եղել է կարտոֆիր, իսկ 1951 թվականին՝ ճիմ։

Ցանքը կատարվել է 1950 թվականի մայիսի 4-ին, 1951 թվականին՝ ապրիլի 13-ին, 50 քառակուսի մետր փորձամարգերում։ Ցանքը կատարվել է 45 սմ միջշարքային տարածություններով, իսկ շարքերում բույները բնից 25 սմ հեռավորությամբ, յուրաքանչյուր բնում նոսրացումից հետո թողնվել է երկու բույս։ Վեգետացիայի ընթացքում կատարվել է բույսի բարձրության, բույսի վրա տերևների թվի, տերևների երկարության ու լայնության, կողերի թիվը մեկ բույսի վրա, բույսերի չոր և թաց մասսայի հարաբերակցությունը, կողերի երկարության ու տրամագծի շարքերի թիվը մեկ կողրի վրա, հատիկների թիվը մեկ շարքում, հատիկների բացարձակ կշիռը և բերքի հաշվառումը։

1950 թվականին Կալինինոյում կլիմայական պայմաններն այնքան էլ նպաստավոր չէին եգիպտացորենի աճման ու զարգացման համար։ Դարունը խիստ անձրևային էր, ամառը, ընդհակառակը, երաշտ, այն ժամանակ, երբ եգիպտացորենի բույսն իր ծաղկման փուլում (որը համընկնում է ամառային ամիսներին) ավելի մեծ պահանջ ունի խոնավության։

Չնայած այս հանգամանքին՝ եգիպտացորենի բույսերն իրենց այնքան էլ վատ չզգացին։ 1950 թվականին եգիպտացորենի բույսերը ծաղկման սկզբին ունեին, միջին հաշվով, 120 սմ բարձրություն, բավական լայն ու երկար տերևներ, բացի սրանից, աչքի էր ընկնում եգիպտացորենի մեկ բույսի վրա կողրերի թիվը այն է՝ միջին հաշվով 1—2 (տես աղյուսակ 1)։

Աղյուսակ 1

Եգիպտացորենի բույսերի ուսումնասիրություններ 1950—1951 թթ.

Սորտերի անուն	Բույսերի բարձրություն սմ		Տերևների թիվը		Տերևի երկար. սմ		Տերևի լայն. սմ		Կողերի թիվը մեկ բույսի վրա	
	1950	1951	1950	1951	1950	1951	1950	1951	1950	1951
Միննեսոտա-23	113,4	—	8,3	—	64,2	—	7,7	—	1,5	—
Գրուշևսկայա	111,2	—	7,8	—	68,4	—	8,3	—	—	—
Բարբա	125,8	—	9,8	—	71,2	—	9,6	—	1,0	—
Հիբրիդ Բուկովսկի	125,2	—	9,4	—	71,4	—	8,4	—	1,4	—
Կարծր 13 ձև	—	182	—	16	—	92,3	—	9,7	—	1,2
Սոերլինգ	—	150	—	11,6	—	70,8	—	8,6	—	1,2
Իմերետինսկի	—	142	—	14,2	—	75	—	10,6	—	1,6
Շայարային	—	107	—	9,2	—	64,2	—	8,5	—	1,2
Ադժամետսկի	—	183	—	16	—	94,6	—	10,4	—	1,6
Կրուգ	—	192,4	—	16,2	—	93	—	10,6	—	1,6

Աղյուսակի տվյալներից երևում է, որ ընդհանուր տերևածածկոցի մեծությամբ առաջին տեղը բռնում է Կրուգ սորտը, որի բույսն ունի 192,4 սմ միջին բարձրություն և մեկ բույսի վրա 16 և ավելի տերև մեկ բույսի վրա կողերի թիվը նույնպես բարձր է՝ 1,6։ Կրուգ սորտից հետո մնում Ադժամետսկի սորտը և Կարծր-13 ձևը, որոնց բույսն ունի 182—183 սմ միջին բարձրություն, 16 տերև, իսկ մեկ բույսի վրա կողերի թիվը հավասար է 1,2—1,6-ի։

Եգիպտացորենի բույսի գլխավոր ցողունի վրա տերևների թիվը տվյալ սորտի համար կայուն է ու քիչ է փոփոխվում արտաքին պայմանների ազդեցությունից, և դա բավական ճիշտ ցուցանիշ է տվյալ սորտի վեգետացիոն շրջանի տևողությունը որոշելու համար. ամենից վաղահաս է այն սորտը, որն ունի թիվով քիչ՝ 8—10 տերև, իսկ ամենից ուշահասը՝ մինչև 25 տերև։

Եգիպտացորենի Գրուշևսկայա սորտը, որն ուներ 8—9 տերև, Կալինինոյի պայմաններում ամենից վաղահասը դուրս եկավ և շուտ ծաղկեց, իսկ Ադժամետինսկի և Կրուգ սորտերը, որոնք ունեին 16 և ավելի տերև, ավելի ուշ ծաղկեցին։

Հայտնի է, որ բարձրորակ սիլոս ստացվում է այն դեպքում, երբ սիլոսացվող մասսայի մեջ բույսի փայտացած մասեր քիչ են լինում։ Բույսի ավելի շատ աննգանյութեր պարունակող մասերի՝ տերևի ու հասկի տոկոսը որքան բարձր լինի սիլոսացվող մասսայի մեջ, այնքան լավորակ սիլոս կստացվի։

Ուսումնասիրությունների ընթացքում որոշվել է Եգիպտացորենի փորձարկվող սորտերի չոր և թաց մասսաների հարաբերակցությունը։ Տվյալները բերվում են աղյուսակ 2-ում։

Աղյուսակ 2

Եգիպտացորենի չոր մասսայի ելունքը սորտերով

Սորտի անվանումը	Բույսի կշիռը		
	մինչ չորացումը	չորացումից հետո	չոր մասսայի ելունքը %-ներով
Միննեսոտա-23	930	229	24,5
Գրուշևսկի	840	223	26,5
Կարծր-13 ձև	700	210	30,0
Բարբա	980	310	31,6
Հիբրիդ բուկովսկի	785	217	27,7
Ստերլինգ	910	152	16,7

Աղյուսակ 2-ի տվյալներից երևում է, որ փորձարկվող սորտերից ամենամեծ քանակությամբ չոր մասսա տալիս են բարբա սորտը՝ 31,6 %, և կարծր նոր ձևը՝ 30 %, իսկ մնացած սորտերը տալիս են ավելի պակաս քանակությամբ չոր մասսա։ Բացի այդ, փորձերից պարզվում է նաև, որ եգիպտացորենի կուլտուրայից չոր մասսայի ելը ընդհանրապես շատ ցածր է։ Այստեղից հետևում է, որ ավելի լավ է եգիպտացորենն օգտագործել կանաչ և սիլոսացված վիճակում, այն որպես խոտ չպետք է օգտագործել, քանի որ տնտեսապես ձեռնատու չէ։

1950—1951 թվականներին դրված փորձերը ցույց տվեցին, որ Կալինինոյի շրջանի անջրդի պայմաններում, որպես սիլոսացվող կուլտուրա, կարելի է մշակել եգիպտացորեն, որը հյութալի է, պարունակում է մեծ քանակությամբ սննդանյութեր և ունի միջին բերքատվություն։

Բերքատվության արդյունքները բերվում են աղյուսակ 3-ում։

Աղյուսակ 3

Եգիպտացորենի կանաչ մասսայի միջին բերքը

Սորտերի անվանումը	Բերքը գ/հ	
	1950	1951
Միննեսոտա-23	169	—
Գրուշևսկայա	220	—
Կարծր-13 ձև	250	262
Բարբա	182	—
Հիբրիդ Բուկովսկի	188	—
Ստերլինգ	262	180
Ադժամետսկի	—	171
Կրուգ	—	266,5
Շաքարային	—	211
Իմբերատինսկի	—	220

Աղյուսակում բերված տվյալներից երևում է, որ փորձարկվող սորտերից կանաչ մասսայի ամենաբարձր բերք տալիս են Կրուգ սորտը՝ 266,5 գ/հ, Ստերլինգ սորտն ու Կարծ-13 ձևը՝ 262 գ/հ, Գրուշևսկի և Իմբերատինսկի սորտերը՝ 220 գ/հ։

Բացի կանաչ մասսայից, 1951 թվականին մեզ հաջողվեց Կալինինոյի փորձադաշտում Կարծր-13 ձևից ստանալ եգիպտացորենի հասունացած հատիկներով որոշ կողրեր։

Ստացված կողրերն ունեին 17,3 սմ երկարություն, մեկ կողրի վրա կար 12 շարք, յուրաքանչյուր շարքում 30,1 հատիկ, հատիկների բացարձակ քաշը՝ 150 գրամ։

Այս կողրերն առանձնացված են հետագա սելեկցիոն աշխատանքների համար։

Մեր երկարամյա փորձերի տվյալներից մեզ հիմք են տալիս անելու հետևյալ եզրակացությունները։

1. Կալինինոյի շրջանում, որպես սիլոսացվող կուլտուրա, կարելի է մշակել եգիպտացորեն, միայն պետք է ընտրել բարձրադիր հողեր, որտեղ գարնանային ջրերը չեն կուտակվում։

2. Սիլոսային մասսա ստանալու համար կարելի է մշակել եգիպտացորենի Կրուգ, Իմերետինսկի և Ճաքարային 148 սորտերը, իսկ հատիկ ստանալու համար՝ Գրուշևսկի սորտը և Կարծր-13 ձևը։

Հայկական ՍՍՌ Գյուղմինիստրության
Անասնապահական ինստիտուտ

Р. Г. КУРГИНЯН

ИЗУЧЕНИЕ НЕКОТОРЫХ СОРТОВ КУКУРУЗЫ В КАЛИНИНСКОМ РАЙОНЕ

Резюме

Перед нами была поставлена задача изучить и выделить высокоурожайные сорта кукурузы, пригодные для возделывания в высокогорных влажных районах (Калининский район). Эти сорта должны быть хладостойки, засухоустойчивы и скороспелы, с одновременным обеспечением высокой урожайности.

С этой целью в 1950 году нами были поставлены опыты на Калининском опытном поле.

Было испытано 10 сортов кукурузы. В течение двух лет были произведены наблюдения, описания и анализы (данные приведены в таблицах 1, 2, 3), показывающие, что в более влажных условиях Калининского района содержание влаги в растениях выше, а процент сухих веществ ниже.

Проведенные нами двухлетние наблюдения показали, что в Калининском районе на богаре можно с успехом культивировать кукурузу на силос. Эта культура дает высокий урожай и содержит большое количество сочной питательной массы.

Сорт кукурузы—Круг дал лишь 266,5 центнера зеленой массы. Низкая урожайность объясняется тем, что кукуруза—растение теплого климата, попадая сразу в резко отличные условия холодного Калининского района, приспосабливается с трудом.